ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 30.09.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-18/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության N 1/73-1/16224-15 գրությամբ ներկայացված «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02257413) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-18/15 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-18/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 25.09.2015թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը N 1/73-1/16224-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը N 1/73-1/16224-15 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթե-

մատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 19.06.2015թ. N 45/15 գրության պատճենը:

2. «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշում

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 22.06.2015թ. ներկայացրած բողոքով «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն հայտնել է, որ մասնակցել է «ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ՖՄՀԴ-ՊԸԾՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (10.06.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3.«ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 19.06.2015թ. N 45/15 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից հյուրատան և տրանսպորտային ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՖՄՀԴ-ՊԸԾՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարություն էլեկտրոնային փոստով կատարված հարցմանն ի պատասխան ստացված եզրակացությամբ պարզվել է, որ Ընկերությունը ՀՀ պետական

բյուջեի նկատմամբ ունի 3749384 (երեք միլիոն յոթ հարյուր քառասունինը հազար երեք հարյուր ութսունչորս) ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Արդյունքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.06.2015թ. տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.1.1 կետով որոշում է կայացրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված N 2 հայտարարությունը (պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին) որակել իրականությանը չհամապատասխանող և «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել:

4. ՍՑ-ԳԲԽ-18/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 25.09.2015թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության N 1/73-1/16224-15 գրությամբ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02257413) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

5. ՍՑ-ԳԲԽ-18/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության N 1/73-1/16224-15 գրությամբ ներկայացված «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից հյուրատան և տրանսպորտային ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՖՄՀԴ-ՊԸԾՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն, «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ն և Գրողների «Ծաղկաձորի Ստեղծագործական տուն» ՓԲԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (10.06.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.06.2015թ. տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 8.1 կետով որոշել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ին, երկրորդ տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ին և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ նաև՝ Նախարարություն):

4. Պատվիրատուն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին 12.06.2015թ. կատարած հարցմամբ Նախարարությանը խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի կողմից 2015թ. հունիսի 10-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2015թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն 2015թ. հունիսի 10-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 3749384 ՀՀ դրամի չափով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.06.2015թ. տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության՝ 1.1.1 կետով որոշում է կայացրել առաջին տեղն զբաղեցրած

մասնակցի՝ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված N 2 հայտարարությունը (պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին) որակել իրականությանը չհամապատասխանող և «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել:

7. «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն 22.06.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով վիճարկել է ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ժամկետանց պարտքեր ունենալու հանգամանքը և պահանջել է չեղյալ համարել «ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից հյուրատան և տրանսպորտային ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՖՄՀԴ-ՊԸԾՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2015թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժելու, ինչպես նաև «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

8.ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 14.07.2015թ. կայացրած որոշմամբ մերժել է «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի 22.06.2015թ. ներկայացրած բողոքը:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-18/15 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների

գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 125-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդը արձանագրում է, որ Ընկերությունն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (10.06.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Մինչդեռ, ի պատասխան Պատվիրատուի 12.06.2015թ. հարցմանը՝ ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից 16.06.2015թ. տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (10.06.2015թ.) ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, որի գումարը կազմել է 3749384 ՀՀ դրամ:

Խորհուրդը հայտնում է, որ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն 22.06.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով վիճարկել է իր ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հանգամանքը՝ խնդրելով չեղյալ հայտարարել «ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից հյուրատան և տրանսպորտային ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՖՄՀԴ-ՊԸԾՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2015թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժելու, ինչպես նաև «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, սակայն Խորհուրդը հիմք է ընդունել ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության 16.06.2015թ. Պատվիրատուին տրամադրած եզրակացությունը և

14.07.2015թ. կայացրած որոշմամբ մերժել է Ընկերության բողոքը, քանի որ Ընկերության կողմից ***2015թ. հունիսի 10-ի դրությամբ*** ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացվել:

Այսպիսով, ***«Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն 2015թ. հունիսի 10-ի դրությամբ*** ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 3749384 ՀՀ դրամի չափով, իսկ Ընկերության կողմից ***2015թ. հունիսի 10-ի դրությամբ*** ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ որևէ հիմնավոր ապացույց չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության N 1/73-1/16224-15 գրությամբ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02257413) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Արման Մնացականյան**

Անդամներ՝ **Էդգար Հակոբյան**

Վիկտորյա Ղազարյան